ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունվարի 2025 թվականի N 63-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 867 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման, դեղերի մեծածախ իրացման, բժշկական արտադրատեսակների արտադրության, բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 867 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) N 1 հավելվածի 17.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«17.1. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիցենզավորման հարթակի միջոցով

լիազոր մարմին է ներկայացնում համապատասխան որակավորում ունեցող անձի անունը, ազգանունը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, որի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանությունը ստուգվում է բուժաշխատողների ռեգիստրի միջոցով:

Դեղերի արտադրության լիցենզիա ստանալուց հետո որակավորված անձի փոփոխության դեպքում լիցենզավորված անձը սույն կետով նախատեսված տեղեկատվությունը լիազոր մարմին է ներկայացնում փոփոխություններից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:».

2) N 3 հավելվածի 12-րդ և 13-րդ կետերում «վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստում անցած» բառերը փոխարինել «առաջին անգամ մասնագիտական գործունեության կամ ՇՄՋ հավաստագիր ունեցող» բառերով.

3) N 3 հավելվածի 43.1-ին կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) դեղատանը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) աշխատանքն իրականացնող դեղագետի կամ դեղագործի անունը, ազգանունը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, որի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանությունը ստուգվում է բուժաշխատողների ռեգիստրի միջոցով».

4) N 3 հավելվածի 44.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«44.1. Լիցենզավորված անձի կողմից լիցենզավորող մարմին ներկայացված սույն կարգի 43.1-ին կետի 1-ին, 3-րդ, 4-րդ ենթակետերով և 44-րդ կետով նախատեսված փաստաթղթերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ լիցենզավորող մարմինը փաստաթղթերը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրությամբ տեղեկացնում է լիցենզավորված անձին: Սույն կարգի 43.1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի՝ Հայաստանի Հանրապետության

օրենսդրությանը համապատասխանությունը որոշվում է հիմք ընդունելով բուժաշխատողների ռեգիստրում առկա տեղեկությունները, ինչի մասին լիցենզավորված անձը տեղեկացվում է հաղորդագրության միջոցով:».

5) N 5 հավելվածի 18-րդ կետում «համապատասխան որակավորված անձի մասին տեղեկատվություն՝ կցելով համապատասխան որակավորում ունեցող անձի մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականը և վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստման վկայականը՝ համաձայն սույն որոշման» բառերը փոխարինել «սույն որոշմանը համապատասխան որակավորում ունեցող անձի անունը, ազգանունը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, որի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանությունը ստուգվում է բուժաշխատողների ռեգիստրի միջոցով,» բառերով.

6) N 5 հավելվածի 19.1-ին կետը «լիցենզավորված անձին» բառերից հետո լրացնել «, բացառությամբ որակավորված անձանց մասին տեղեկությունների, որոնց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանությունը որոշվում է հիմք ընդունելով բուժաշխատողների ռեգիստրում առկա տեղեկությունները, ինչի մասին լիցենզավորված անձը տեղեկացվում է հաղորդագրության միջոցով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից ութ ամիս հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

23.01.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ